



156. ՀԼՄԸՆՉՈՂԵՆ ԱՆՄԻԳՅ ՉԸՆ ՏԱԼ

Մին շտեմանոված գեղեցկուհի վրեշ մին տղու հավան շար կենում, հու վրեր քյիննամ ար թա օգե, մին փոտ ար տիննում, ետ տամ: Տա ամենաշատ սիրիլիս չի իլնլ հըմաշկուտ տղորանցը: Վերլը, տղեքլը հըվաքվում ըն, մսլըհաթ անում, մին շատ դաշանգլ աղու լավ շորեր, թանգն շերքլեղկա կյեց տամ, թնվանգլը ճիտը քցնում, պատրոնդաշին նան խանշալը կապում դարկում, վրեր քյիննամ էտ ըխճըկանն օգե, նհետն էլ սուվըրցընում, վրեր ուրանն ոխակավ պահե, էն ախճիգլը հըմաշկուտ տղորանցը սիրում չի:

էտ տղան ծին նստում ա, զենքերը կապած, դամշին օթումը տնրոնը տալավ քյիննամ հանում ըխճըկանը տանն առալը, սնսը պիցիրցրած, ըխճըկանը հորը ոխակավ ծեն տամ: Հնրը տանը չի իննում, ախճիգլն ա ակուշկան պեց անում, տղեն եշում: Տղաս մինչև էտ դամշին տիրած ա իննում չինըտակեն. ախճիգլը վրեր եշում ա, տա բնրդան շաղվում ա, դամշին ծըեոքան վրեր քցում, ետնան թա՝ քու հնր հիշտեղ ա քյեցալ: Ախճիգլը թա՝ քյեցալ ա ծմակը, խեշակ պիրի, վրեր տինի չինըտակետ:

